ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏՅԱՆ ԹԵՄԵՐ

Սույն թվականի սեպտեմբերի 4-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն հայրապետական պաշտոնական այցով մեկնեց ԱՄՆ Հայոց Արեւելյան եւ Արեւմտյան թեմեր՝ մասնակցելու տեղի հայ համայնքների կողմից կազմակերպված թեմական կարեւոր միջոցառումների՝ Բոստոնում «Հայ Ժառանգության զբոսայգու» եւ Լոս Անջելեսի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց Մայր Եկեղեցու բացմանը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Շահե արեղա Անանյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի օպարալեզու մամուլի գրասենյակի պատասխանատու Տ. Կտրիճ քհն. Դեւեճյանը: Լոս Անջելեսում սեպտեմբերի 10-ին Հայոց Հայրապետին միացան հայրապետական շքախմբի մյուս անդամները՝ Կոտայքի թեմի առաջնորդ Գեր. Տ. Առաքել եպս. Քարամյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գեր. Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴԿ տնօրեն Հոգեշնորհ Տ. Վարդան աբդ. Նավասարդյանը եւ Վեհափառ Հայրապետի գավազանակիր Հոգեշնորհ Տ. Անանիա աբդ. Ծատուրյանը:

Նորին Սրբության ուղեւորությունն անցավ Փարիզով, որտեղ Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ Ֆրանսահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Նորվան աբք. Զաքարյանի, թեմական եւ ծխական վարչությանց, ինչպես նաեւ թեմական պատգամավորական խորհրդի ներկայացուցիչների հետ:

Սեպտեմբեր 9-ին ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի կատարվեց Բոստոնի «Հայ Ժառանգության զբոսայգու» հիմնարկեքի արարողությունը: Այս կարեւոր ձեռնարկի հիմնական նպատակն էր ԱՄՆ ազատության եւ անկախության օրրաներից մեկը հանդիսացող Բոստոն քաղաքում արվեստի հուշակոթողի տեսքով հավերժացնելու Հայոց Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակն ու նրանց սերունդների արդար պահանջը՝ վերականգնելու պատմական արդարությունը հաչս թուրք իշխանությանց եւ հազդարարություն միջազգային հանրության: Գնահատելի էին հատկապես մեծազնիվ հայորդիների՝ Մասսաչուսետս նահանգի պետական իշխանությանց ներկայացուցիչ տիար Դիտեր Գութուջյանի եւ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի թեմական-պատգամավորական խորհրդի անդամ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ տիար Ջիմ Գալուստյանի՝ հիշյալ հուշակոթողի բացմանն ի նպաստ ներդրած ջանքերը: Նրանց անմիջական հրավերով ու նախաձեռնությամբ էր, որ բացմանը ներկա էին Մասսաչուսետս նահանգի նահանգապետ Դատրիկ Դըվալը, Բոստոնի քաղաքապետ Ա. Մենինոն, կոնգրեսմեններ եւ ամերիկյան իշխանությանց ներկայացուցիչներ: Հստակ էր նահանգապետի ու քաղաքապետի

դիրքորոշումը Հայոց Ցեղասպանության հարցում. այն պատմական իրողություն է եւ պետք է ճանաչվի ու գնահատվի իբրեւ այդպիսին: Ոչ ոք չի կարող ժխտել այն, որովհետեւ դրա ժխտումն ու դիվանագիտական նպատակներով շահարկումը կհանգեցնի պատմական ճշմարտության ուրացման: Հայոց Հայրապետն էլ իր խոսքում մասնավորապես նշեց. «Միջազգային ողջ հանրության կողմից մերժումն ու դատապարտումն այսպիսի ահավոր ոճրագործությունների պիտի լինեն այն զորեղ սյուները, որոնք ամուր հենարան են համայն աշխարհի խաղաղության հաղթական կամարի»:

Ժամանակակից արվեստի ոգով կառուցվող հուշակոթողն իր արտաքին տեսքով խորհրդանշորեն պիտի հիշեցնի ազատության ու մարդկային իրավունքների համար մարտնչող բոլոր ազնիվ հոգիներին միջազգային հանրության չհատուցած պարտքը՝ Հայոց Ցեղասպանության ճանաչումը:

Սեպտեմբերի 11-ին Ամենայն Հայոց Հայրապետի բարձր հանդիսապետությամբ տեղի ունեցավ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը: Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ եւ թեմակալ եպիսկոպոսների ուղեկցությամբ հայրապետական թափորը, հիրավի, տպավորիչ էր հատկապես հրավիրյալ օտարերկրյա պաշտոնյաների եւ հյուրերի համար, որոնց թվում էր նաեւ Լոս Անջելեսի քաղաքապետ տիար Անտոնիո Վիլլարագոսան: Հայրապետական թափորին մասնակցում էին ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Գեր. Տ. Հովնան արք. Տերտերյանը, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Իրաքահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Ավագ արք. Ասատուրյանը, Գեր. Տ. Եփրեմ արք. Թապպագյանը, Բրազիլահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Տաթեւ արք. Ղարիբյանը, Կանադահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գեր. Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը, Եգիպտահայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպս. Մնացականյանը, Գեր. Տ. Մուշեղ արք. Մարտիրոսյանը (Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության ներկայացուցիչ), Կոտայքի թեմի առաջնորդ Գեր. Տ. Առաքել եպս. Քարամյանը, Գեր. Տ. Վիգեն արք. Այքազյանը, Գեր. Տ. Վահե արք. Հովսեփյանը, Սիրիահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում շեշտեց Խաչի խորհուրդի կարեւորությունը՝ պատգամելով փարված մնալ նրա հավիտենական խորհուրդին:

Հավարտ օծման արարողության Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ եւ ներկայությամբ Լոս Անջելեսի քաղաքապետի օծվեց 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողության արդյունքում զոհված հազարավոր անմեղ հոգիների հիշատակը հավերժացնող խաչքար :

Սեպտեմբերի 12-ի Խաչվերացի հանդիսավոր հայրապետական պատարագն առաջին գոհաբանական աղոթքը դարձավ նորաօծ առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցում: Ամենայն Հայոց Հայրապետի խոսքերի համաձայն առաջնորդանիստ եկեղեցու կառուցման բարեհաջող ավարտը դարձավ հույսի եւ հաջողության գրավականը, որով հայորդիք պիտի շարունակեն պահպանել լուսավորչավանդ իրենց հավատքը հեռավոր ԱՄՆ-ում.«...թեմի առաջնորդանիստ եկեղեցին օծեցինք Սրբոց Ղեւոնդյանց անունով, որպեսզի Տիրոջ Խաչին հուսացյալ սուրբ վկաների հիշատակն ու ավանդը, նրանց հավատքի ու հայրենասիրության

օրինակը քաջալերի ու ամրապնդի ձեզ եւ ձեր զավակներին, եւ Խաղաղականի ափերին միշտ շեն ու պայծառ լինի հայոց հոգեւոր ու ազգային կյանքը»:

Վեհափառ Հայրապետի այցելությունն ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմ նշանավորվեց նաեւ Լոս Անջելեսի շրջակա քաղաքներում պարսկահայոց եւ պոլսահայոց միությունների նորակառույց շենքերի բացումով, որոնց հարկի օրհնությունը կատարվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եւ բարձր հանդիսապետությամբ: Հայոց Վեհապետը մեկ անգամ եւս կարեւորեց Սուրբ Էջմիածնի դերն ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ աշխարհի մնացած մասերում բնակվող հայորդիների համար.«Սուրբ Էջմիածնի լուսավորչահաստատ խորանից ճառագող լույսի կաթիլներն այսօր արդյունավորվում են այստեղ՝Ձեր մեջ, եւ դրանում մեծ է բոլոր այն հայորդիների դերը, ովքեր անսակարկ սիրով ու նվիրումով են կառուցում եւ շենացնում իրենց ազգն ու եկեղեցին»:

Հայրապետական այցն ամփոփող պաշտոնական ընթրիքի ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետն ընդհանուր գծերի մեջ ամփոփեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության, ի դեմս Վեհափառ Հայրապետի, ունեցած հիմնահնդիրներն ու դրանց լուծմանն առաջադրված առաջիկա ծրագրերը: Պաշտոնական ընթրիքին ներկա էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ավագագույն միաբաններից Գեր. Տ. Եփրեմ արք. Թապպագյանը եւ կաթողիկոսական ներկայացուցիչ Գեր. Տ. Մուշեղ արք. Մարտիրոսյանը, ինչպես նաեւ Լոս Անջելեսի քաղաքապետ տիար Ա. Վիլլարաիգոսան, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան տիար Թաթուլ Մարգարյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Սեպտեմբեր 13-ի երեկոյան Ամենայն Հայոց հայրապետին ուղեկցող պաշտոնական պատվիրակությունը հրաժեշտ տվեց Լոս Անջելեսի հայ համայնքին՝վերադառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: